

ՀԲԸՄ



Երկամեայ Տեղեկագիր 2002-2003



ՀԲԸՄ Կեդրոնական Վարչութեան անդամներ, մասնաճիւղերու ատենապետներ, նուիրատուներ, անդամներ եւ պաշտօնեաներ
 նկարուած Նիւ Եորք քաղաքի Ս. Վարդան Եկեղեցոյ առջեւ, Միութեան 82-րդ Ընդհանուր Ժողովին առիթով:
 (Լուսանկար՝ Դ. Բ. Յովհաննէս)

Գրքոյկի կողքի նկարներ.- Վերելի շարք՝ (ձախէն աջ), Նուպար ճամբարի պատանիները: Բանուկա Փարք, Գալիֆորնիա, Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի հիմնարկէք, նկարին մէջ կերտին՝ (ձախէն աջ) դպրոցի հոգաբարձու Երուանդ Տեմիրճեան, հոգաբարձութեան ատենապետ եւ ՀԲԸՄի Կեդրոնական Վարչութեան անդամ Սինան Սինանեան, հոգաբարձու Սիլվա Գարայեան, տնօրէն Յակոբ Յակոբեան, ՀԲԸՄի Նախագահ Պերճ Սեդրակեան, հոգաբարձու Նուպար Ակոբեան, Յովնան Արք. Տերտրեան ու կղերականներ: Սաութֆիլտ, Միչիկընի Ալեքս եւ Մարի Մանուկեան դպրոցի աշակերտներ, նոյն վարժարանի աւարտականներ: Ներքեւի շարք՝ (ձախէն աջ) Երեւանի հայորդաց Կեդրոնի աշակերտներ: Հայաստանի Էրեբունի հիւանդանոցի գերձայնային կեդրոնին մէջ, բժիշկ Հմայեակ Միսակեան հիւանդի մը քննութեան արդիւնքներու ուսումնասիրման ժամանակ, Հալէպի նորակերտ Լազար Նաճարեան-Գարուստ Կիլպէնկեան վարժարանի դպրոցաշէնքը: Հայաստանի վեց Ապուրի Խոհանոցներէն մէկուն մէջ կամաւոր մը կը ծառայէ տարիքոտ հայրենակիցներուն:

Կոնակի նկարներ.- Վերելի շարք՝ (ձախէն աջ), Հայաստանի ֆիլիարմոնիք նուագախումբ: Մոնթրէալի ՀԲԸՄի անդամները Հայաստանի մէջ: Հայաստանի Ամերիկեան Համալսարանի աւարտականներ: Ներքեւի շարք՝ (ձախէն աջ) Նիւ Եորքի 2002 թուականի ամառնային վարժողական ծրագրին մասնակցած ուսանողներ, եւ պաշտօնեաներ: ՀԲԸՄի Մոնթրէալի մասնաճիւղի վարչականները իրենց ատենապետ Փոլ Քիշեանին հետ (տոքի ձախին): Կիպրոսի Միութեանս ֆուքսալի Արարատ խումբի անդամները:



Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն

Ազգային Աւանդներու Պահպանման 97 Տարիներ

ՀԲԸՄ

-ը կը հիմնադրուի 1906 թուականին: 1991 թուականի Հայաստանի անկախացումէն ետք, Միութիւնս հետզհետէ աւելի կարեւոր դեր կը ստանձնէ, կամրջող օղակը հանդիսանալով Հայրենիքի ու Սփիւռքի միջև:


ՀԲԸՄիութիւնը նոր ժամանակներուն յարմարող իր ծրագիրներով ու նպատակակէտերով, կը փորձէ օգտակար հանդիսանալ հայութեան յարափոփոխուող կարիքներուն: Սեփական վարժաններէն կրթաթոշակներու յատկացումներ, Պէյրութի Երիտասարդ Արհեստավարժներէն Նիւ Եորքի վարժողական ծրագիրներ, Հայաստանի Ապուրի Խոհանոցներէն Ամերիկեան Համալսարան, մշակութային ձեռնարկներէն ու մարզական խաղերէն աշխարհի տարբեր հեռուստացոյցի կայաններէն հայութեան վերաբերող ծրագիրներու պատրաստում ու ներկայացում: Բազմաբնոյթ այսպիսի իրագործումներով, ՀԲԸՄիութիւնը առաջապահ այն կազմակերպութիւնն է, որ հայ իրականութենէն ներս միջազգային մակարդակով գործունէութիւն կը ծաւալէ:

Անցնող դարաշրջանին, նիւթական մեր եկամուտներու արդիւնաւէտ յանձանձումը կարելիութիւն ընձեռեց Միութեանս բարգաւաճման: Վերջին քանի մը տարիներուն, բարերարներուն եւ նուիրատու անդամներուն թիւը զգալի յաւելում կրած է, հաւաքաբար անոնք կը ներկայացնեն մեր պատմութեան մեծագոյն նուիրատուութիւնները:

Մինչեւ 1988-ի Հայաստանի ահաւոր երկրաշարժի աղէտը, ՀԲԸՄի հիմնական եկամուտը կը գոյանար իր անդամութեան տուրքերէն, կտակներէն եւ նուիրահաւաքներէն: Վերոյիշեալ դժբախտութենէն ետք հայ ժողովուրդը ընդառաջելով ՀԲԸՄի կոչին, նիւթապէս սատար կանգնեցաւ Միութեանս նոր նախաձեռնութիւններուն եւ որպէս հետեւանք, Բարեգործականի գուտ դրամգլուխը միլիոնաւոր տոլարներով աւելցաւ, ինչը հնարաւորութիւն տուաւ ՀԲԸՄին առաւել արդիւնաւէտութեամբ շարունակելու իր առաքելութիւնը: ՀԲԸՄի ֆինանսական գործառնութեան նկատմամբ հայ ժողովուրդի վստահութիւնը աւելի եւս կ'ամրապնդուի այն փաստի առկայութեամբ, որ Միութիւնս որեւէ հայկական այլ կազմակերպութենէ մը աւելի, տարեկան շուրջ 400,000 կարիքաւոր հայրենակիցներու օգտակար կը հանդիսանայ:

Հայութեան ու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ապագան պայծառ է: Վստահ ենք որ Միութեանս կարեւոր դերակատարութիւն մը վերապահուած է հազարամեակներէն եկող ու բոլորս միաւորող եւ գօտեպնդող ազգային մեր թանկ ժառանգութիւնն ու ինքնութիւնը որպէս աւանդ պահպանելու ջանքերու արդիւնաւորման աշխատանքներուն: Պիտի շարունակենք ու յաջողութեամբ իրականացնենք 21-րդ դարու պահանջները բաւարարող նորանոր ծրագիրներ:

Միասնաբար կարելի պիտի ըլլայ հոյակապ իրագործումներ իրականացնել:



ՀԲԸՄԻ Անդամներուն, Նուիրատուներուն եւ Բարեկամներուն,



83-րդ Ընդհանուր Ժողովին առիթով յետադարձ հայեացք մը անցնող երկու տարիներու ՀԲԸՄԻ գործունեութեան վրայ, մեզ առաւել եւս վերահասու կը դարձնէ յառաջացող այն նոր պահանջներուն ու խնդիրներուն, որ պիտի դիմագրաւենք այս արագօրէն փոփոխուող աշխարհին ի տես: 2006 թուականի Միութեանս հարիրամեակի մօտեցումը, մեզի կը պարտաւորեցնէ լուրջ ուսումնասիրութեան ենթակելու մեր ծրագիրները, հաւաստիանալու համար որ անոնք կը շարունակեն արդիւնաւետութեամբ ծառայել իրենց նպատակին: Մենք պէտք է կարենանք ընկալել յառաջացող կարիքները ու նոր նախաձեռնութիւններու որդեգրումով աշխարհի չորս ծագերուն բաւարարել մեր անդամակցութեան կարիքները:

Շուրջ հարիւր տարիէ ի վեր ՀԲԸՄը կ'ընդառաջէ աշխարհաստարած հայութեան կարիքներուն: Միութեանս ամենօրեայ 17 վարժարանները կը շարունակեն գործել, ուր կ'ուսանին մօտ 6000 աշակերտներ. իսկ շաբաթօրեայ 13 դպրոցները կը ծառայեն հարիւրաւոր հայ աշակերտներու: Իւրաքանչիւր տարի Միութեանս համալսարանական կրթանպաստներու ծրագիրը նիւթապէս կ'օժանդակէ անելի քան 500 յառաջադէմ ուսանողներու իրենց ուսումը աշխարհի լաւագոյն համալսարաններու մէջ կարենալ ամբողջացնելու: Ներկայիս ՀԲԸՄԻ զանազան ծրագիրները, ինչպէս՝ ամառնային երիտասարդական ճամբարները, վարժողական ծրագիրը, Յաջորդ Սերունդի խորհրդատուական ծառայութիւնը, Երիտասարդ Արիւստավարժներու գործունեութիւնը, մարզական ու սկաուտական շարժումները, մշակութային ձեռնարկները եւ հրատարակութիւնները նոր սերունդին կ'ընձեռեն սրանչելի պատեհութիւններ, ինչպէս նաեւ ուսումնական ընկերային եւ արիւստագիտական փորձառութիւն, օժտելով զիրենք անհրաժեշտ բոլոր այն ունակութիւններով, որոնք հնարատրութիւն պիտի տան պահպանելու իրենց ազգային ինքնութիւնն ու ասանդները՝ ստանձնելու վաղուան առաջնորդութիւնը: Միայն Հայաստանի մէջ, ՀԲԸՄը կը հովանաւորէ՝ երեք Հայորդաց Կեդրոններ, առիթ տալով որ շուրջ 3500 աշակերտներ արտադասարանային զբաղումներու մասնակցին. Ապուրի վեց Խոհանոցներ, ուր ամէն օր կը կերակրեն անելի քան 1200 թոշակառուներ եւ որբեր: Տակաւին կարելի է նշել Հայաստանի Ամերիկեան Համալսարանը իր 1000-է անելի շրջանաւարտներով, Հայաստանի Ֆիլիարմոնիք Նուգախումբը, Երեւանի Գերձայնային Կեդրոնը, եւ այլն:

Բնականաբար վերոյիշեալներէն ոչ մէկը կարելի պիտի ըլլար իրագործել առանց երախտաշատ նուիրատուներուն վստահութեան ու նիւթական նեցուկին, ինչպէս նաեւ մասնաճիւղերու անձնագոհ ղեկավարութեան ու Կեդրոնական Վարչութեան մատակարարման: Թոյլ տուէք Կեդրոնական Վարչութեան կողմէ իմ խորին ու անկեղծ գնահատանքս ու շնորհակալութիւնս յայտնել այն բազմահարիւր կամատր միութեանականներուն, որոնք կը նուիրուին ապահովելու Միութեանս ծրագիրներու իրականացումը:

Վերադառնալով 2002-2003 տարիներու իրագործումներուն, Միութիւնս շարունակեց նախորդ տարիներուն սկսուած ծրագիրները ինչպէս նաեւ

2002 թուականի Նիւ Եորքի ամառնային վարժողական ծրագրի մասնակիցները անձամբ կը ծանօթանան քաղաքի ելեւմտական աշխուժութեան, փորձառութիւն ձեռք ձգելով այս մարզէն ներս:

Աշակերտները աշխարհին հետ կապ կը հաստատեն Երեւանի երեք Հայորդաց Կեդրոններէն մէկուն մէջ:



Առաջնորդելով Մեր Երիտասարդները

Երիտասարդութեան մասնագիտական ուղղութիւն տրամադրելը եւ իրենց յաջողութեան համար միջոցներ ստեղծելը ՀԲԸՄԻ գործունեութիւններէն մին է: Նիւ Եորքի ու Փարիզի որակաւորման՝ ինչպէս նաեւ Լոս Անձելոսի Յաջորդ Սերունդ ծրագիրներու մասնակիցները յստուկ ուղղութիւն կը ստանան իրենց արժանիքները արդիւնաւետ ձեւով օգտագործելու:



Պայծառ Ապագայ Կերտելու Առաջադրանքով

Կրթական հարցերը միշտ ալ կարեւոր բաժին ունեցած են Միութեանս գործունեութեան մէջ: Հայաստանի Հայորդաց Կեդրոններուն միջոցներու տրամադրումով եւ ՀԲԸՄԻ ֆինանսաւորած աշխարհաստարած վարժարաններով երիտասարդները կը պատրաստուին դիմագրաւելու ապագայի մարտահրաւերները:

Ֆինանսատրեց նոր ծրագիրներ, եւ այս հակառակ տնտեսական առկայ տազնապին ու նիւթական դժուարութեանց, որոնք իրենց հերթին պիտոճեական դժուարութիւն ստեղծեցին Միութեանս բազմապիսի ծրագիրներու մատակարարման: Մինչ տնտեսական կացութիւնը կը վատթարանար, ՀԲԸՄի նուիրատուներու քիւր կ'աւելնար հնարարութիւն ստեղծելով տարեկան մեր պիտոճեի բացերը հաւասարակշռելու: Անցնող երկու տարիներուն մեր ընթացիկ ծրագիրներուն համար ծախսուած գումարը հասած է 57 միլիոն տոլարի, որ կը ներկայացնէ 12.5 միլիոն տոլարի յաւելում մը բաղդատուած 1992-1993 տարիներու ծախսերուն: Վերջին տասը տարիներուն ՀԲԸՄի ընդհանուր դրամագլուխը նոյնպէս մօտ 100 միլիոն տոլարով յաւելում կրած է: Այստեղ կարեւոր է նշել որ մինչ Միութեանս կ'ընդարձակէ իր գործունէութեան ծիրն ու տարողութիւնը, անհրաժեշտ է համակարգուած ջանքերով աշխատիլ հետեւողականօրէն աւելցնելու մեր ընդհանուր եկամուտները: Վստահ եմ որ մեր նուիրատուներուն առատաձեռնութիւնը Միութեանս կարելիութիւն պիտի ընձեռնէ հասնելու համապիտ հայութեան յարափոփոխ կարիքներուն, Միութեանս դարձնելով 21-րդ դարու պահանջներուն համապատասխան կազմակերպութիւն:

Մեր վերջին Ընդհանուր Ժողովէն առջին, հիմնական վերանորոգումներու ենթարկուած են Միութեանական կարգ մը կառոյցներ ու դպրոցներ ինչպէս՝ ՀԲԸՄի Մոնթրէալի (Գանատա), Ուոթըրթուանի (Մէտէչուսէց), եւ Գորտուպա (Արժանթինի) Կեդրոնները, նաեւ՝ Հալէպի (Սուրիա), Տիքրոյթի (Միշիկըն) եւ Գանոկա Փարք (Գալիֆորնիա) վարժարանները: Նաեւ ՀԲԸՄը ձեռնարկեց Արցախի վերաբնակեցման հիմնական ծրագրին, օգնելով կառուցելու պատերազմի պատճառով աւերուած շրջաններ: Բարեգործականը ամառնային վարժողական իր ծրագիրը ընդարձակելով ընդգրկեց նաեւ Ֆրանսան, ինչպէս նաեւ նիւթապէս օժանդակեց Սուրբ Էջմիածնի կրօնատրներուն յատուկ կառուցելով բնականներ նաեւ՝ նոր եկեղեցի մը Երեւանի Հարաւ-արեւմուտքը:

Նիւ Եորքի Նուպար ճամբարը նշեց իր քառասնամեակը, իսկ Սուրիոյ Քեսապ ճամբարը՝ իր երեսունհինգ ամեակը եւ Միութեան Ֆրանսայի ճամբարը՝

1000-է աւելի ունկնդիրներ հետեւեցան Պուէնոս Այրէսի ՀԲԸՄի մասնաճիւղի հովանաւորած, քաղաքի ֆիլիարմոնիք նուագախումբի հայկական հրապարակին մօտ տեղի ունեցած ելոյթին:



Քաջալերելով Հայկական Մշակոյթը

Պուէնոս Այրէսի համերգներէն եւ Լոս Անճելոսի օփերէթներէն մինչեւ ֆինանսատրում՝ «Հայերը-վերապրումի պատմութիւն» վաւերագրական տեսաերիզին, որ 23 հանրային հեռուստացոյցի կայաններ հեռաւիտեցին Հիւսիսային Ամերիկայի տարածքին, հայկական մշակոյթը կը գնահատուի ստուար հասարակութեան կողմէ իր եզակի եւ բարձր յատկութիւններուն համար:

իր քառամեակը: ՀԲԸՄի շուրջ 4000 անդամ ունեցող Երիտասարդ Արիեստավարժները իրենց գործունէութիւնը ընդարձակելով, Նիւ Եորքի Whitney Museum of American Art հաստատութեան հետ միասնաբար ձեռնարկ կազմակերպեցին: Անոնք նաեւ ֆինանսատրեցին Հայաստանի Ամերիկեան Համալսարանի էլէկտրոնային գրադարանի հաստատման ծրագիրը եւ ստեղծեցին ՀԲԸՄի Հայաստանի Հայորդաց Կեդրոններուն ի նպաստ հիմնադրամ մը: Վերջին երկու տարիներուն Երիտասարդ Արիեստավարժներու յանձնախումբեր կազմուեցան Մոնթրէալի (Գանատա), Ֆիլատելֆիոյ (Փենսիլվեմիա) եւ Պէյրոսի (Լիբանան) մէջ:

Հակառակ այս բոլոր յաջողութիւններուն տակալին շատ աշխատանքներ մեզի կը սպասեն: Մեր ազգային աւանդն ու ժառանգութիւնը պահպանելու եւ զարգացնելու պատասխանատուութիւնը պէտք է հաւաքաբար կրենք: Իսկապէս հարկ է յաւելեալ ճիգ գործադրելով գերազանցել ակնկալիքները, ի մի հաւաքելով մեր բոլոր կարողականութիւնը, եռանդն ու տաղանդը, գտնելու եւ փորձել ամօքելու հայուն կարիքները, համոզուելով որ մեր մասնաճիւղերը կը մնան աշխուժ եւ աշխատունակ, պատրաստ յանձն առնելու նոր նախաձեռնութիւններ ի տես յարափոփոխ կարիքներուն, միեւնոյն ժամանակ փորձել ապահովելու Մայր Հայրենիքի ու անոր քաղաքացիներուն ազատ եւ բարգաւաճ ապրելու իրաւունքը: Մեր հայեացքը դէպի ապագան, Միութեանս հարիւրամեակն ու աւելի հեռուն յառելով, պիտի խնդրեմ իրաքանչիւր միութեանականէ մտածել թէ ինք այսօր ինչ կրնայ ընել, որ դրական տարբերութեան վերածուի վաղուան հայուն համար: Միասին գործակցելով, կրնանք վստահ ըլլալ որ հարիւր տարի ետքն ալ ՀԲԸՄի այլ նախագահ մը, ինչպէս եւ այսօր, հպարտ պիտի զգայ տեղեկագրելով Միութեան շինիչ գործունէութեանց մասին, գիտնալով որ իր քիկունքին ունի պատմական հարուստ անցեալ մը, ինչպէս նաեւ խոստմնալից ու հոյակապ ապագայ մը:

M. Stepanyan

Պերճ Սեդրակեան, ՀԲԸՄի Նախագահ

ՀԲԸՄի Նախագահ Պերճ Սեդրակեան Մոնթրէալի Ալեքս Մանուկեան Կեդրոնի վերանորոգումներուն վերաբերեալ մասնաճիւղի աւտենապետ Փօլ Քիշեանի բացատրութիւններուն կը հետեւի:



Վերանորոգումներ՝ ապագայի կարիքներուն համար

Միութեան կեդրոններ ու դպրոցաշէնքեր վերջին տարիներուն վերանորոգուեցան, զանոնք արդի յարմարութիւններով օժտելու, լաւագոյնս ծառայելու համայնքի կարիքներուն: ՀԲԸՄի Հալէպի, Գորտուպայի, Շիրակոյի, Մոնթրէալի եւ Ուոթըրթուանի մասնաճիւղերը իրենց կեդրոններու վերանորոգման նպատակին համար ՀԲԸՄի անդամներէն թէ բարեկամներէն միլիոնաւոր տոլարներ հանգանակեցին:

Աշխարհապիտ ՀԲԸՄիությունը 2002-2003

ԱՆԳԼԻԱ

ԳԱՆԱՏԱ

Վանգուվոր

Թորոնթո
Դանիել և Ալիսա Ջարոլեան Վարժարան
Երիտասարդական Շարժում

Մոնթրեալ
Արմեն Գեպե-Ալեք Մանուկեան Վարժարան
Մոնթրեալի Երիտ. Արհեստավարժներ
Երիտասարդական Շարժում

**ՄԻԱՑԵԱԼ
ՆԱՀԱՆԳՆԵՐ**

Տիբորյո
Ալեք և Մարի Մանուկեան Վարժարան

Օբլենո-Սան Ֆրանսիսքո
Երիտ. Արհեստավարժներ

Շիբալո
Շարաթօրեայ Վարժարան

Նիւ Ինկլոնդի Երջանակ
Մեծն Պոթոնի Տիկնանց Ցանձնախումբ
Փրովիտրեն Արանց Ցանձնախումբ

Սիլիբոն Վելի

Գլիվլենո
Շարաթօրեայ Վարժարան

Նիւ Եորք
ՀԲԸՄի Կեդրոնական Գրասենյակ
Երիտասարդ Արհեստավարժներ Մեծն Նիւ Եորք
Անդրանիկ Պարախումբ
Նիւ Եորքի Ցատուկ Ջեռնարկներու Ցանձնախումբ
Ամառնային Վարժողական Ծրագիր
Նույաբ Ճամբար

Ֆրեզնո

Ֆիլատելֆիա
Երիտասարդ Արհեստավարժներ

Հիւսթոն

Հարաւային Գալիֆորնիոյ Երջանակ

- ★ Ապտոներ
- ★ Արեւմտեան Լոս Անճելոս
- ★ Լոս Անճելոս - Հայ Կին
- ★ Կլենտել/Փասադինա
- ★ Լոս Անճելոսի Երիտ. Արհեստավարժներ
- ★ Յաջորդ Աերունդ Խորհրդատուական Ծրագիր
- ★ Արտաւագո Թատերախումբ
- ★ Երիտասարդական Գործունէութիւն
- ★ Հարաւային Գալիֆորնիոյ Տիկնանց Ցանձնախումբ
- ★ Մեծն Լոս Անճելոս
- ★ Սան Տիէկո
- ★ Սան Ֆերնանտոյի Հովիտ
- ★ Մանուկեան-Տեմիքեան Վարժարան
- ★ Երիտ. Շարժում
- ★ Փալմ Սփրինկս
- ★ Օրէնճ Քաունթի
- ★ Շարաթօրեայ Դպրոց
- ★ Երիտ. Արհեստավարժներ

Տրանսայի Երջանակ

- ★ Լիոն
- ★ Մարսելլ
- ★ Ամառնային Ճամբար
- ★ Երիտ. Շարժում
- ★ Նիւ
- ★ Սէն Ծամոն
- ★ Վալանս
- ★ Վիէն
- ★ Փարիզ
- ★ Շարաթօրեայ Վարժարան
- ★ Գողթան Երգչախումբ
- ★ Նույաբեան Գրադարան
- ★ Ամառնային Վարժողական Ծրագիր
- ★ Երիտ. Շարժում

Հիւսիսային Ամերիկա

Հարաւային Ամերիկա

ԿԻՊՐՈՍ

- ★ Լաոնաքս
- ★ Լիմասոլ
- ★ Նիկոսիա
- ★ Մելգոնեան Կրթական Հաստատութիւն
- ★ Երիտ. Շարժում

ՊԱՐԱԳՅԱՆ

Ման Փաուլո
Փաուէն և Ռէնինա Պագարեան Վարժարան
Երիտասարդական Շարժում

Գորտուպա
Արարատ Պարախումբ
Երիտասարդական Շարժում

Մոնթեվիտո
Նույաբեան-Մանուկեան Վարժարան
Երիտասարդական Շարժում

Պուէնոս Այրես
Տիկնանց Ցանձնախումբ
Մարի Մանուկեան Վարժարան
Շնորհալի Երգչախումբ
Երիտասարդական Շարժում

Լիբանանի Երջանակ

- ★ Չահլէ
- ★ Երիտ. Շարժում
- ★ Թրիփոլի
- ★ Երիտ. Շարժում
- ★ Պէյրութ/Սիւն Էլ Ֆի/Անթիլիաս
- ★ Տեմիքեան Կեդրոնի Ցանձնախումբ
- ★ Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարան
- ★ Դարուհի-Յովակիմեան Վարժարան
- ★ Լեւոն Կ. Նագարեան Վարժարան
- ★ Երիտ. Արհեստավարժներ
- ★ Կենտրոնի Ցանձնախումբ
- ★ Պարախումբ
- ★ Վահրամ Փափագեան Թատերախումբ
- ★ Դարմանատուն
- ★ Երիտ. Շարժում

Սուրիոյ Երջանակ

- ★ Գամիշլի
- ★ Դամասկոս
- ★ Կիլլապի Կիլլաքեան Վարժարան
- ★ Երիտ. Շարժում
- ★ Եագուպիէ
- ★ Լաթաքիա
- ★ Հալէպ
- ★ Լազար Նաճարեան-Գալուստ Կիլլաքեան Վարժարան
- ★ Սարեան Նկարչական Ակադեմիա
- ★ Դարմանատուն
- ★ Երիտ. Գործունէութիւն
- ★ Քեսապ
- ★ Ամառնային Ճամբար

34 երկիրներու մէջ **ՀԲԸՄ** ը իր բարեսիրական, կրթական ու մշակութային բազմաբնոյթ գործունէութեամբ օգտակար կը հանդիսանայ շուրջ **400 000** հայերու:



Լոնտոն
Երիտասարդական Շարժում
Լոնտոնի Թրասթ

Գիւմրի
Ս. Յակոբ Եկեղեցի

Վանաձոր
Ս. Գրիգոր Նարեկ Եկեղեցի

Սեւան
Վագգէնեան Ծեմարան
+ Ապուրի Խոհանոց

Ստեփանակերտ
Զոհուած
Ազատամարտիկներու
Բնակարաններ

Էջմիածին
Մայր Տաճարի
Արտաքին Խորան
Կղերականներու
Բնակարան
+ Ապուրի Խոհանոց

Հրազդան
+ Ապուրի Խոհանոց

Երեւան
+ Արաբկիրի Հայորդաց Կեդրոն
+ Մալաթիայի Հայորդաց Կեդրոն
+ Նորքի Հայորդաց Կեդրոն
Հայաստանի Ամերիկեան Համալսարան
Երեւանի Պետական Համալսարան
Ս. Երրորդութիւն Եկեղեցի
Ս. Գրիգոր Մայր Տաճար
+ Երեք Ապուրի Խոհանոցներ
Հայաստանի ֆիլհարմոնիք Նուգախումբ
+ Ս. Ներսէս Մեծ Հիանդանոց
Գերձայնային Ախտանանաշման Կեդրոն

Նորաշէն
Հարաբաղի
Վերաբնակեցման
Ծրագիր

Թեսաղոնիկէ
Պարախումբ

- ★ Եամպոլ
Շարաթօրեայ Վարժարան
- ★ Լապոլո
Շարաթօրեայ Վարժարան
- ★ Պուրկաս
ՀԲԸՄի Ծամբար
- ★ Սիլիսթրա
Շարաթօրեայ Վարժարան
- ★ Սիլվրն
Շարաթօրեայ Վարժարան
- ★ Սոֆիա
Երիտ. Շարժում
- ★ Վարնա
Տոպրիչ
Շարաթօրեայ Վարժարան
- ★ Րուսէ
Շարաթօրեայ Վարժարան
- ★ Փլովտի
Շարաթօրեայ Վարժարան
Երիտ. Շարժում

Յունաստանի Երջ. Յանձնաժողով
Տիկնանց Յանձնախումբ
Աթէնք
Արթաքի Գալփաքեան Վարժարան
Երիտ. Շարժում

Հայաստան եւ Հարաբաղ

- #### ՈՒՂԵՆԾԱՆ
- Երկիր
- ★ Երջանակալի Յանձնաժողով
 - ★ Մասնաճիղ/ Յանձնախումբ
 - ★ Կեդրոն
 - Վարժարան
 - Շարաթօրեայ Վարժարան
 - Համալսարան
 - Երիտ. Արհեստավարժներ
 - Խորհրդատուական Ծառայութիւն
 - ★ Ս. Էջմիածնի հետ գործակցաբար
 - Բարեսիրական Ծրագիրներ
 - Մշակութային Շարժում
 - Բժշկական Այլաաարկութիւն
 - Ամառնային Ծամբար
 - Ամառնային Վարժողական Ծրագիր
 - Երիտ. Շարժում (Ակադոս/մարզական/ընկերային)

Միջին Արեւելք

Պաղտատ
Շարաթօրեայ Վարժարան
Երիտ. Շարժում

Թեհրան
Մարի Մանուկեան Վարժարան
Նուարդ Կիլպէնկեան Վարժարան
Երիտ. Շարժում

ԵԳԻՊՏՈՍԻ ԵՐԶԱՆԱԿ

- ★ Աղեքսանդրիա
Երիտ. Շարժում
- ★ Գահիբէ
Երիտ. Շարժում
- ★ Հելիոպոլիս

Ափրիկէ/Ասիա/Աւստրալիա

Սիոնի
Մշակութային Յանձնախումբ
Ալեքսանոք Նախակրթարան
Շարաթօրեայ Դպրոց
Երիտ. Շարժում

Ատիս Ապապա
ԵԹՈՎՊԻԱ

Ճոհանէսպուրի

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

Մելպուրն
Երիտ. Շարժում

Երկամեայ Տեղեկագիր 2002 - 2003



ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Դեկտեմբեր 31

ԳՈՅՔ	2003	2002
Ընթացիկ Գոյք		
Դրամատան մեջ պատրաստ Արժեթուղթեր	\$ 6,501,168	\$ 5,346,438
Գանձելի հաշիւներ	172,678,570 *	160,158,304 *
Գանձելի տոկոս	1,991,490	1,176,323
Գումար	530,351	596,092
	181,701,579	167,277,157
Անշարժ կալուածներ	66,626,937	65,616,657
Սարքեր, կարասի եւ այլ գոյքեր	2,121,520	2,353,290
Գումար Գոյքի	250,450,036	235,247,104
ՊԱՐՏՔԵՐ ԵՒ ՀԻՄՆԱԴԱՐՄՆԵՐ		
Պարտականք		
Վճարելի հաշիւներ	\$3,889,565	\$3,752,049
Վճարելի պարտաթուղթեր	766,107	648,642
Գումար Պարտքերու	4,655,672	4,400,691
Հիմնադրամներ		
Ոչ պայմանաւորեալ	37,306,159	37,381,161
Առժամայէս պայմանաւորեալ	21,692,378	24,061,912
Պայմանաւորեալ	186,795,827	169,403,340
Գումար Հիմնադրամներու	245,794,364	230,846,413
Ընդհանուր Գումար	250,450,036	235,247,104

* Կը ներկայացնեն ՀԲԸՄիութեան արժեթուղթերու տոմարական արձանագրութիւնը 12/31/02-ին եւ 12/31/03-ին որոնց սակարանային արժէքը յաջորդաբար Ամերիկեան Տոլարով \$147,363,586 եւ \$179,321,950 են

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԲԸՄ Նիւթական Երկամեայ Տեղեկագիր
10-Տարուայ Բաղդատական Գումարներուն

	2003	(*%)	2002	(**%)	1992
Ընդհանուր Գոյք	\$250,450,036	6.46	\$235,247,104	66	\$141,791,752
Ընդհանուր Մուտք	40,448,522	50.86	26,811,319	(19)	33,113,860
Ընդհանուր Ելք	26,769,020	(10.96)	30,064,590	69	17,792,227

Միամեայ (*%) Յաւելում/Նուազում 10-ամեայ (**%) Յաւելում/Նուազում

Ամերիկեան Տոլարով

ՄՈՒՏՔ

Օժանդակութիւն՝
Նուիրատուութիւններ
Անդամավճար
Յատուկ Ձեռնարկներ

Հասոյթ՝

Շահաբաժին եւ տոկոս
Կալուածային
Դպրոցական

ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՍՈՅԹ ԵՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՅԱՒԵԼՈՒՄ

ԳՈՒՄԱՐ ՄՈՒՏՔԻ

ԵԼՔ

Յայտագիրներ եւ Վարչական Ծախք
Յայտագիրներ՝
Կրթական
Մշակութային
Կրօնական
Մարդասիրական

Վարչական Ծախք
Դրամահաւար
Դրամասակային Տարբերութիւն/
Վերադասաւորում

Նախորդ Շրջանէ՝ Վերադասաւորում

Գումար՝ Յայտագիրներ եւ Վարչական Ծախք

Յաւելում (Նուազում) Ելեւնուտքի
Միջ հիմնադրամային փոխանցում
Յաւելում (Նուազում) Հիմնադրամներու

Հիմնադրամներ- տարեակիզբին

Հիմնադրամներ- տարեվերջին



Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն

ԵԼՈՒՄՈՒՏՔ

Առ Դեկտեմբեր 31, 2001

Առ Դեկտեմբեր 31, 2001

Ոչ Պայմանաորեալ	Առժամապէս Պայմանաորեալ	Առժամապէս Պայմանաորեալ	Գումար	Ոչ Պայմանաորեալ	Առժամապէս Պայմանաորեալ	Առժամապէս Պայմանաորեալ	Գումար
\$ 2,175,104	\$ 5,694,656	\$ 13,320,682	\$ 21,190,442	\$ 1,279,349	\$ 7,325,389	\$ 3,115,703	\$ 11,720,441
513,150			513,150	302,259	-	-	302,259
2,560,000	9,485	90,676	2,660,161	2,678,028	-	14,522	2,692,550
5,248,254	5,704,141	13,411,358	24,363,753	4,259,636	7,325,389	3,130,225	14,715,250
2,994,794	481,034	-	3,475,828	769,231	197,552	-	966,783
1,532,309	8,913	-	1,541,222	910,155	9,101	-	919,256
11,067,719	-	-	11,067,719	10,210,030	-	-	10,210,030
15,594,822	489,947	-	16,084,769	11,889,416	206,653	-	12,096,069
444,113	(493,597)	49,484	-	304,590	(339,326)	34,736	-
21,287,189	5,700,491	13,460,842	40,448,522	16,453,642	7,192,716	3,164,961	26,811,319
14,591,834	534,661		15,126,495	14,067,918	1,000,311		15,068,229
5,499,469	449,405		5,948,874	6,013,939	129,496		6,143,435
236,932	2,287,382		2,524,314	34,183	4,154,645		4,188,828
548,129	548,971		1,097,100	642,094	1,885,706		2,527,800
20,876,364	3,820,419	-	24,696,783	20,758,134	7,170,158	-	27,928,292
2,193,183	12,216		2,205,399	2,119,653	45,144		2,164,797
227,621	-		227,621	187,305	30,411		217,716
(360,689)	(94)		(360,783)	(301,941)	55,726		(246,215)
2,060,115	12,122	-	2,072,237	2,005,017	131,281	-	2,136,298
22,936,479	3,832,541	-	26,769,020	22,763,151	7,301,439	-	30,064,590
(1,268,449)	-		(1,268,449)	-	-		-
21,688,030	3,832,541	-	25,500,571	22,763,151	7,301,439	-	30,064,590
(380,841)	1,867,950	13,460,842	14,947,951	(6,309,509)	(108,723)	3,164,961	(3,253,271)
305,839	(4,237,484)	3,931,645	-	3,474,652	(3,520,109)	45,457	-
(75,002)	(2,369,534)	17,392,487	14,947,951	(2,834,857)	(3,628,832)	3,210,418	(3,253,271)
37,381,161	24,061,912	169,403,340	230,846,413	40,216,018	27,690,744	166,192,922	234,099,684
\$ 37,306,159	\$ 21,692,378	\$ 186,795,827	\$ 245,794,364	\$37,381,161	\$24,061,912	\$169,403,340	\$230,846,413

ՄԵՐ ՀԱՒԱՏԱՄՔԸ

- > Զգտիլ Լաւագոյնին
- > Հայապահպանում
- > Ստեղծագործական Մօտեցում
- > Չանքերու համադրում
- > Արհեստավարժ Վերաբերմունք
- > Յարգանք

Չմաշող ու միշտ արդիական հնչող վերոյիշեալ հիմնական արժէքները անբաժան մասը կը կազմեն հայկական բնատրութեան: ՀԲԸՄը որդեգրելով այս սկզբունքները կը ջանայ հայութեան պայծառ ապագան ապահովել:

Միութեանս 2002 եւ 2003 տարիներու գործունէութեան մէջ, վերը նշուած արժանիքներու դրսեւորման օրինակներ չեն պակսիր: ՀԲԸՄի բոլոր ծրագիրներն ալ արդիւնքն են նուիրատուութիւններու եւ խմբային աշխատանքի, փաստելով որ հայերը կանքը ունին եւ պատրաստ են իրար օգնելու ու միասին գործակցելու:

Լաւագոյն ակնկալիքները պիտի իրագործուին անպայման:

ՀԲԸՄի Մասնաճիւղերու Աւտենապետներ

Արժանօրէն, Պուէնոս Այրէս- Վահրամ Հայրապետեան: Գորտոպա- Խուան Նորիիսան: Աստրալիա, Մելբուռն-Մարալ Չորպաճեան: Սիւնի- Արամ Յակոբեան: Աստրիա, Թամարա Պապայեան- Պոհնալեան: Պելճիգա, Վարդգէս Գնաճեան: Պրագի, Գարոս Տէր Յարութիւնեան: Պուկարիա, Պուրկաս- Յակոբ Մովսէսեան: Փոլոնի- Ռուբէն Չառուշեան: Մոնթիա- Սոնիա Աւագեան-Պետրոսեան: Վառնա- Վանուի Առաքելեան: Գանատա, Մոնթրէալ- Պօղոս Քիշեան: Թորոնթօ- Յակոբ Ալբունեան: Վանգուվըր- Տիգրան Քիչիգիլօգեան: Կիպրոս, Լառնակա- Ստեփան Գամարեան: Լիմասոլ- Մերուժ Սարգիսեան: Նիկոսիա- Հրաչ Մանուկեան, Գարեգին Կոստանեան: Եգիպտոս, Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողով, Գահիրէ- Պերճ Թերզեան: Ալեքսանդրիա- Սարգիս Վարձպետեան: Անգլիա, Յարութ Աղաճանեան: Լոնտոնի Թրասթ- Նորճ Քիրճեան: Եթովպիա, Վահագն Գարիպետեան: Ֆրանսա, Շրջանակային Յանձնաժողով- Տենիս Քէչեճեան: Փարիզ- Վահէ Թորոսեան, Բիչքրտ Ապտալեան: Լիոն- Մերժ Վարդանեան: Մարսէյլ- Պերնարտ Պետրոսեան: Նիւ- Գոթ Տագիր- Ալէն Գեպապճեան: Մէն Շամոն-Մէն Էթիէն- Էմմանուէլ Անտեան, Լէոնարտո Պասմաճեան: Վալանս- Վարուժան Վառլապետեան: Վիէն- Սուրբիաս Սուրբիասեան: Յունաստան, Կեդրոնական Վարչութիւն, Աթէնք- Գրիգոր Խաչատուրեան: Թեսալոնիկէ- Հայկունի Փոքրօրսպետեան: Իրան, Ռուբէն Տէր Պօղոսեան: Իրաք, Համբարձում Շեքրանեան: Իտալիա, Հայկ Ալեքսանեան: Լիբանան, Շրջանակային Յանձնաժողով, Պէյրութ- Աւետիս Տեմիրճեան: Հարաւային Աֆրիկէ, Ժագ Ատանալեան: Չոնգոնիա, Թալին Աւագեան: Սուրիա, Շրջանակային Յանձնաժողով, Հալէպ- Պետրոս Պօյաճեան, Մելրոն Շամանեան: Դամասկոս- Թագոր Պօյաճեան: Գամիշլի- Սկրտիչ Երոյեան: Ուրուկոյ, Աւետիս Պարսամեան: Միացեալ Նահանգներ, Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակ- Միմոն Միմոնեան: Մեծն Ֆրեզնօ- Պերճ Գալանճարեան: Կլէմոնթ/Փասատենա- Յակոբ Պոյաճեան: Լոս Անճելոս Հայ Կիւն- Սօնա Եագուպետեան: Մեծն Լոս Անճելոս- Ալիս Գոնճեան: Արեւմտեան Լոս Անճելոս- Սեան Վարդէրեան: Օքլենտ-Սան Ֆրանսիսքօ- Աշխէն Մուրատեան: Օրէնճ Քաունթի- Գրիգոր Մահտեսեան: Փայն Սքրիմկա- Մէրի Պերդեան: Սան Տիէյո- Անի Գալայճեան-Լանուգա: Սան Ֆերնանտօ Հովիտ- Արա Ալիշեան, Տիկնանց Յանձնախումբ- Մարալ Երանոսեան-Պապեան: Սիլիքոն Հովիտ- Երուանդ Չօրեան: Շիքսօ- Հրաչ Տումանեան: Գլիլլենտ- Մեարտի Մեղրակեան: Մեծն Տիպոյթ- Նատիա Սարաֆեան, Դաիթ Թերզիպաշեան: Հիւսթըն- Սարգիս Օհանեան: Նիւ Ինկլիւնտ Շրջանակային Յանձնաժողով, Պոսթրն- Սուրէն Մահտերճեան: Մեծն Պոսթրնի Տիկնանց Յանձնախումբ- Համեստ Աղամեան: Փրովիտորնս Արանց Ուիլիքոն Ազնաւորեան: Ֆիլադելֆիա- Էլիզապէթ Պարոն, Գարա Սամէլեան:

ՀԲԸՄի Կեդրոնական Վարչութեան Անդամներ ու Տնօրէններ

Պերճ Մեղրակեան, ՆԱԽԱԳԱՀ
Սարգիս Տեմիրճեան, ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀ
Արշալիր Կեօնճեան, ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀ
Նազար Նազարեան, ԳԱՆՉԱՊԱՀ եւ ՓՈԽ ԱՏԵՆԱՊԵՏ
Ժոզէֆ Պասրալեան, ԱՏԵՆԱԴՊԻՐ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս,
ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ

Լուիզ Մանուկեան Սիմոն,
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ

Մայքըլ Անտոյր, Անդամ-ԱՄՆ
Գարըլ Պաղտասարեան-Ապլանեան, Անդամ-ԱՄՆ
Բիչքրտ Մանուկեան, Անդամ-ԱՄՆ
Պենոն Սեան, Անդամ-ԱՄՆ
Սէմ Սիմոնեան, Անդամ-ԱՄՆ
Սիման Սիմանեան, Անդամ-ԱՄՆ
Տիգրան Թեվրիզեան, Անդամ-ԱՄՆ
Էտուարտ Ժախեան, Անդամ-ՊԵՆՆՍԻԿԱ
Լեոն Բեպապճեան, Անդամ-ՖՐԱՆՍԱ
Գառնիկ Եագուպետեան, Անդամ-ՍՈՒՐԻԱ

ՊԱՏՈՒԱԿԱԼ ԱՆԴԱՄՆԵՐ
Հայկաշէն Ուզունեան
Պերի Չորթեան

Պօղոս Նուպար, ՀԻՄՆԱԴԻՐ
Ալէք Մանուկեան, ՅԿԵԱՆՍ ՊԱՏՈՒԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ

ՀԲԸՄի Նախագահական Ակումբ Տէր եւ Տիկ. Վարդգէս Պալեան, Աւտենապետներ

Երիտասարդ Արհեստավարժներու Յանձնախումբ
Գանատա, Մոնթրէալ- Մարք Միմալիլեան, Այտա Մեղրակեան: Լիբանան, Պէյրութ- Արիի Դանիէլեան, Կասիա Մարտիրոսեան: Չոնգոնիա, Ժրնէ- Գարիկ Մանսէրեան- Քէթթին: Միացեալ Նահանգներ, Լոս Անճելոս- Վրէժ Յովսէփեան, Անահիտ Անդրեասեան, Օրէնճ Քաունթի- Նաթալի Պալիքճեան, Մելլա Թոնայիեան, Ալիս Բոլալեան, Հիւսիսային Բալիֆորնիա- Էտուարտ Միմասեան, Սարգիս Մողոմնեան, Մեծն Նիւ Եորք- Նաթալի Կապրէլեան, Ֆիլադելֆիա- Սթի Օտապաշեան:

ՀԲԸՄի Ամէնօրեայ եւ Շաբաթօրեայ Վարժարաններ

Արժանօրէն, Պուէնոս Այրէս- Մարի Մանուկեան: Աստրալիա, Սիւնի- Ալեքսանդր Նախակրթարան, Ալէք Մանուկեան Շաբաթօրեայ Վարժարան: Պրագի, Սաու Փաուլօ- Փառէն եւ Բեճիւս Պազարեան: Պուկարիա, Տոպրիչ, Հասրուի, Փոլոնի, Բուս, Սիլիսթրա, Սիլիլըն, Եամպոլ- Շաբաթօրեայ Վարժարաններ: Գանատա, Մոնթրէալ- Արմէն Քէպէր-Ալէք Մանուկեան, Թորոնթօ- Դանիէլ եւ Ալիս Չարուկեան: Կիպրոս, Նիկոսիա- Մելգոնեան Կրթական Հաստատութիւն: Ֆրանսա, Փարիզ- Ալէք Մանուկեան Շաբաթօրեայ Վարժարան: Յունաստան, Աթէնք- Արթաթի Գալիպետեան: Իրան, Թեհրան- Մարի Մանուկեան, Նուարդ Կիլպէնկեան: Իրաք, Պաղտաստ- Բուրաստան Ուրբաթօրեայ Վարժարան: Լիբանան, Պէյրութ- Դարուի Յակոբեան Երկրորդական, Լեոն Կ. Նազարեան Նախակրթարան, Պօղոս Գ. Կարմիրեան Միջնակարգ: Սուրիա, Հալէպ- Լազար Նաճարեան-Գալուստ Կիլպէնկեան, Դամասկոս- Կիլասալի Կիլպէնկեան: Ուրուկոյ, Մոնթփիլտօ- Նուպարեան-Մանուկեան: Միացեալ Նահանգներ, Գանուկա Փարք- Մանուկեան-Տեմիրճեան, Շիքսօ- Միսակ Հ. Վարժապետեան Շաբաթօրեայ Վարժարան, Գլիլլենտ- Շաբաթօրեայ Վարժարան, Քոսա Մեսա (Գալիֆորնիա)- Շաբաթօրեայ Վարժարան, Սաութֆիլտ (Միչիլըն)- Ալէք եւ Մարի Մանուկեան Վարժարան:



Հրապարակույ Չանգումաները

ARMENIA

Twelve Years After Independence

Հինգ լեզուներով հրատարակուող ՀԲԸՄԻ 10 պարբերականները, որեւէ այլ կազմակերպութեան տեղեկատուական ցանցէ աւելի, մեծ թիւով հայերու մատչելի կը դարձնեն հայ կեանքի նորութիւնները:

Անգլերէն լեզուով լոյս տեսնող AGBU NEWS (Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ) պարբերաբերը հայ իրականութիւն մէջ ամենատարածուն հրատարակութիւնն է, որ մուտք կը գործէ աշխարհի տարբեր երկիրներու 80,000 բնակարաններ: Քոյր հրատարակութիւն UGAB MAGAZINE-ը (Փարիզ, Ֆրանսա), մուտք կը գործէ յաւելեալ 20,000 ֆրանսախօս բնակարաններ:

Հայերէն լեզուով հրատարակուող ՅՈՒՆԱԿ-ը, Միութեանս հնագոյն պաշտօնաբերքն է որ կը ծառայէ հայախօս հասարակութեան:

Այլ հրատարակութիւններ ինչպէս սպաներէն լեզուով լոյս տեսնող GENERACION 3 (Պուէնոս Այրես, Արժանթին), ԽՕՄՆԱԿ (Պէրուք, Լիբանան), հայերէն-արաբերէն, ՏԵՂԵԿԱՏՈՒ (Գահիրէ, Եգիպտոս), հայերէն-արաբերէն, ՄԻՈՒԹԻՒՆ (Միտնի, Աստրալիա), հայերէն-անգլերէն, ՏԵՄԻԼԸ (Թորոնթօ, Գանատա), հայերէն-անգլերէն եւ վերջապէս անգլերէն լեզուով հրատարակուող ԱՐԱՐԱՏ պարբերաբերը (Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ) կը միտին հայութեան խօսնակները դառնալու ոչ հայախօս եւ օտար հասարակութեան:

Միութեանական հրատարակութիւններու կողքին ՀԲԸՄԻ կ'օժանդակէ նաեւ այլ հայկական թերթերու եւ հրատարակութիւններու, ինչպէս նաեւ Հայաստանի Գրողներու Միութեան: 2002 թուականին Միութիւնս օժանդակեց Փիթըր Պալաքեանի մեծապէս գնահատուած «Ճակատագրի Սեւ Շունը» գործին հայերէն թարգմանութեամբ հրատարակման:

Ընթնելով արդի հաղորդակցութեան ծիրէն ներս համակարգչային համացանցի հետզհետէ աճող կարեւորութիւնը, ՀԲԸՄԻ համացանցերը, ինչպէս օրինակ www.agbu.org-ը, ուր կ'այցելեն ամսական 5000 այցելուներ, կը պարունակէ հայութեան, եւ մասնատրապէս Միութեանս վերաբերող զանազան տեղեկութիւններ, նուիրատուներուն, անդամներուն եւ ընդհանրապէս հասարակութեան տեղեկ պահելու կազմակերպութեանս գործունէութեան ու արձանագրած իրագործումներուն մասին:



ՀԲԸՄԻ ՀԱՄԱՅՆՅԵՐ

- Նիւ Եորք Կեդրոնական Գրասենեակ www.agbu.org
- ՀԲԸՄ Լոնտոն www.agbu.org.uk
- ՀԲԸՄ Նիւ armencity.free.fr/associations/UGAB/entree.htm
- ՀԲԸՄ Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողով www.agbuca.org
- ՀԲԸՄ Միտնի www.agbu.org.au
- ՀԲԸՄ Թորոնթօ www.agbutoronto.ca
- ՀԲԸՄ Պուէնոս Այրես www.ugab.org.ar
- ՀԲԸՄ Նուպար ճամբար www.campnubar.org
- ՀԲԸՄ Մարզական Նուպար Միութիւն www.usnubarparis.free.fr

ՀԲԸՄԻ Երիտասարդ Արհեստավարժներ

- Մեծն Նիւ Եորք www.agbuypony.org
- Լոս Անճելոս www.agbuypla.org
- Հիւսիսային Գալիֆորնիա www.agbuyunc.org
- Օրէյնն Քաունթի, Գալիֆորնիա www.agbuyunc.org

ՀԲԸՄԻ Վարժարաններ

- Ալեք եւ Մարի Մանուկեան (Մաութֆիլտ Միչիկըն) www.manooqian.org
- Նուպարեան-Մանուկեան (Ուրուկույ) www.ugabnubarian.edu.uy
- Արմէն Քէպէք-Ալեք Մանուկեան (Մոնթրէալ) www.alexmanooqian.qc.ca
- Մանուկեան-Տեմիրճեան (Գանոկա Փարք, Գալիֆորնիա) www.agbumds.org
- Մարի Մանուկեան (Պուէնոս Այրես) www.ugab.org.ar
- Մելկոնեան Կրթական Հաստատութիւն (Կիպրոս) www.melkonian.ac.cy
- Զարուկեան (Թորոնթօ) www.agbutoronto.ca

Ասյնը կրմը ԱԳԲԻ Արղածացու Տերապուլ Ստապուր Գրուածսու Ցախար ուրրուտախի

Ինքնութեան Հպարտութիւն

Հայկական ինքնութիւնը գունատը խճանկարի նմուշ մըն է իրայատուկ իր ձեւին ու կերպարանքին մէջ: ՀԲԸՄի մասնաճիւղերը, ազգային ինքնութեան հանդէպ իրենց անվերապահ հաւատարմութեամբ ու եռանդուն նուիրումով, Միութեանս սիրտն ու ոգին են: Իրաքանչիւր գաղութ կողջունէ այն բոլոր հայերը որոնք կը ցանկան իրենց ջանքերը միացնել միասնական ազգային նպատակի մը շուրջ: Այդպիսի օրինակներէն է ՀԲԸՄի Ֆրանսայի շրջանակի յոյժ քաջալերելի **Արցախի Վերաբնակեցման ծրագիրը**, որ կը սատարէ վերաշինելու 1988-1994 թուականներու պատերազմին հետեանքով լքուած եւ աներուած գիւղերը: Այս գաղափարի յղացողն ու մղիչ ուժը ՀԲԸՄի Կեդրոնական Վարչութեան անդամ Լեւոն Քէլայազեանն է, որ Ֆրանսայի ՀԲԸՄի Շրջանակային Յանձնաժողովի գործակցութեամբ մինչեւ այժմ վերանորոգած է 22 բնակարաններ Նորաշէն գիւղին մէջ: Միութեանս կողմէ որդեգրուած այս նախաձեռնութիւնը, կը մնայ ՀԲԸՄի հիմնադրութեան հարիւրամեակի գլխաւոր ծրագիրներէն մին:

Ֆրանսայի Շրջանակային Յանձնաժողովը ձեռնարկած է նաեւ Արցախեան պատերազմի նահատակ մարտիկներու աշխներուն եւ անոնց երեխաներուն օժանդակութեան: Իրաքանչիւր ընտանիք այս ծիրէն ներս կը ստանայ երկու հորթ եւ երկու կաթնատու կովեր, իրենց ընտանեկան կարիքները հոգալու: ՀԲԸՄի Լոնտոնի ու Լոս Անճելոսի մասնաճիւղերը յատուկ հանգանակութիւններով մեծապէս սատարած են այս ծրագրին:

ՀԲԸՄի Պուկարիոյ, Սուրիոյ, Ֆրանսայի ու Միացեալ Նահանգներու ճամբարները ամբար ընթացքին երիտասարդներուն եւ պատանիներուն համար հայկականութեան հետ առնչուելու հոյակապ առիթ մըն են, ուր անոնք մէկտեղուելով, կեանքի ամբողջ տեսողութեան իրենց ընկերակցող նոր բարեկամութիւններ եւ ուրախ յիշողութիւններ կը ստեղծեն: Ամէն ամառ հազարէ աւելի պատանիներ կը հանգստանան ճամբարներուն մէջ եւ հայկականութեամբ լիցքատրուած կը վերադառնան իրենց ընտանիքներուն:

Անցնող 8 տարիներուն երիտասարդ ու աշխուժ խմբակ մը առաջացաւ ՀԲԸՄի ծիրէն ներս, անոնք՝ **Երիտասարդ Արիւեստավարժներն** են: Բարձր մասնագիտութիւններու տիրացած հայերու այս խումբը կը միտի համախմբել երիտասարդ մասնագէտ հայորդիները, նեղ մասնագիտականի կողքին կազմակերպելով ընկերային ու մշակութային ձեռնարկներ, միեւնոյն ժամանակ հարստացնելով նաեւ նոր սերունդին հայկականութեան հետ առնչուելու փորձը:

Մեր մասնաճիւղերէն ներս գործող հազարաւոր միութենականներու հաւատամքներէն մին հայկական մշակոյթի լաւագոյն աւանդներու տեղական պայմաններուն յարմարեցնելն ու պահպանելն է: Արուեստներու տարածումը միշտ ալ Միութեանս ուշադրութեան կեդրոնը հանդիսացած է: ՀԲԸՄի շատ մը մասնաճիւղեր կը հովանաւորեն պարաֆիտմբեր, երգչաֆիտմբեր, քատերաֆիտմբեր եւ այլ մշակութային շարժումներ: Լարք երաժշտական ընկերութեան հետ միասնաբար, Զուարթ օֆերէթի ներկայացումը Լոս Անճելոսի **Միութեանս Արուաւազ քատերաֆիտմբին** կողմէ, հրապուրեց աւելի քան 6000 հանդիսատեսի, նկատաւելի կերպով անելցնելով քատերաֆիտմբի հովանաւորներուն թիւը:

Հայաստանի Ֆիլիարմոնիք նուագաֆիտմբը



Ֆրանսայի (վերեւի նկար), եւ Ամերիկայի (ներքեւի նկար) ՀԲԸՄի ամառնային ճամբարներու մասնակիցներ:



Տեր եւ Տիկ. Լեւոն Քէլայազեան (կեդրոնը ձախին) Արցախի վերաբնակեցման ծրագրի գծով օժանդակուող հայրենակիցներու հետ:



«Աւտրալիոյ Հայերը» գործին յաջողութեան առիթով, որ առաջին այս տիպի աշխատութիւնն է Աւտրալիոյ հայութեան մասին, Թալին Թաշճեան (կեդրոնը), նկարուած ՀԲԸՄի տեղական մասնաճիւղի անդամներ Վահէ Արթինեանի, Սասուն Գրիգորեանի, Թէրի Չէփմընի, ինչպէս նաեւ հայկական եկեղեցւոյ, համայնքի կազմակերպութեանց, տեղեկատու ընկերութիւններէն ու կրթական հաստատութիւններէն ներկայացուցիչներ:

Միութեանս կողմէ կը ստանայ տարեկան յատկացումներ, կարենալ շարունակելու իր շարքական ելոյթները, ինչպէս նաեւ՝ վճարելու արուեստագէտներուն ամաաթոշակները, գնուած նոր գործիքներու փոխարժէքը, միջազգային հիւր արուեստագէտներու պատուագիները, վարչական ու յատուկ ձեռնարկներու ծախսերը: Ֆիլիարմոնիքը յաջողութեամբ ելոյթներ ունեցած է Եւրոպա, Միջին Արեւելք եւ Ամերիկա, հրապարակելով երկվեցեակէ աւելի երժշտական ձայներիզներ:



Հայաստանի Ֆիլհարմոնիք Նուագախումբ



Հիսիսային Գալիֆորնիոյ ՀԲԸՄի Երիտասարդ Արհեստավարժներու տարեկան 2002 թուականի ձմրան կալայի կազմակերպիչ յանձնախումբը, որ հարիրաւոր մասնագիտութիւններու տէր երիտասարդներ համախմբեր էր, վայելելու նաեւ Սան Ֆրանսիսքոյի տեսարժան վայրերը:



ՀԲԸՄի Գորտոպա մասնաճիւղի Ատենապետ Խուան Նորիխան, Միութեան Նախագահ Պերճ Սեդրակեանի (կեդրոնը) ու տեղական համայնքի ղեկավարներուն եւ անդամներուն հետ միասին, ՀԲԸՄի մարզական Կեդրոնի բացման արարողութեան ընթացքին:

Մեծատաղանդ երաժշտահան Արամ Խաչատրեանի ծննդեան հարիւրամեակին առիթով **Խաչատրեան 100-ի** յայտագիրը շրջագայեցաւ ՀԲԸՄի աշխարհատարած մասնաճիւղերը:

Աջին, դաշնակահար Շահան Արծրունին (կեդրոնը) ՀԲԸՄի Սառու Փառլոյ մասնաճիւղի Ատենապետ Գարլոս Մարեոս Տէր Յարութիւնեանի, պատուակալ երեսփոխան Ֆերնանտո Գասպարեանի եւ ՀԲԸՄի Պրագիլի մասնաճիւղի Տարուան Մարդը ընտրուած Դոկտ. Վարուժան Պորմայեանի միասին:



2003-ի սկիզբը Գահիրէի ՀԲԸՄի մասնաճիւղը պատուեց թեմադրիչ Ատոն Էկոյեանը ԱՐԱՐԱՏ ֆիլմի պատրաստութեան համար: Չախին Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պերճ Թերզեան կը շնորհաւորէ գանատահայ ֆիլմարտադրիչը հայկական մշակոյթը տարածելու եւ ծանօթացնելու իր աշխատանքներուն համար:

Ցարգանք Դէպի Ազգային Արժէքները

Ազգային աւանդներով հպարտ եւ անոր պահպանման անհրաժեշտութեան գիտակցութեամբ, ՀԲԸՄը բնաւ չի խուսափիր նորարարութիւններէն, ապահովել է եւր թէ անոնք պիտի ծառայեն մեր մշակոյթի ու համայնքներու բարգաւաճման:

ՀԲԸՄի ծրագիրները կ'արտացոլեն հայկական տոհմիկ արժէքները, ներշնչելով իրարհասկացողութիւն ու յարգանք:

Հասարակութեան ուժեղ զգացումներով եւ աւանդապահ երկիւղածութեամբ, ՀԲԸՄը սերտօրէն կը գործակցի Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հետ: Միութեան նուիրատուները նիւթապէս օժանդակած են **Ս. Էջմիածնի շրջափակի Սուրբ Խորանի** շինարարութեան, Էջմիածնի մէջ կրօնատներու բնակարաններու կառուցման, **Երեւանի Ս. Սարգիս եւ Ս. Երրորդութիւն**, ինչպէս նաեւ **Գիւմրիի Ս. Յակոբ** ու **Վանաձորի Ս. Նարեկ եկեղեցիներու** վերանորոգման, աշխարհի մեծագոյն հայկական եկեղեցոյն, մայրաքաղաք **Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի** շինարարութեան ֆինանսատրամ: Նաեւ ՀԲԸՄի բարերարներէն մին, առատաձեռնօրէն օժանդակած է Սեանայ լիճի ափին գտնուող **Վազգէնեան Աստուածաբանական Ընծայրանի** կառուցման:

Ս. Էջմիածնի հետ գործակցաբար Միութիւնս յառաջ կը տանի **ՀԲԸՄի Հայորդաց Կեդրոններու ու Ապուրի Խոհանոցներու ծրագիրները**: Հայորդաց կեդրոնները կը ծառայեն 3500 աշակերտներու ուսումնառութեան իսկ Էջմիածնի, Երեւանի, Հրազդանի, Սեանի ու Երեւանի մէջ գործող 6 Ապուրի խոհանոցները, ամէն օր կը կերակրեն աւելի քան 1200 ծերունի թոշակաւորներ եւ որբեր:



Չախին ՀԲԸՄի Հայաստանի վեց Ապուրի Խոհանոցներէն մէկէն տեսարան մը, կրեթականներուն համար կառուցուող բնակարաններ Էջմիածնի մէջ, Ս. Երրորդութիւն եկեղեցին Երեւանի մէջ, Վազգէնեան Աստուածաբանական Ընծայրանը գեղատեսիլ Սեանայ լիճի ափին:

Ստեփան Գրիգորեան Բիւրիակաւոր Գաղտնիք Գրական Գործունէութեան Գրաստան



Լաւազոյնի Արաջատրուանքով

Տաղանդները անպակաս են մեր ժողովուրդին մէջ եւ ՀԲԸՄը միշտ պատրաստ է այդպիսիներուն նեցուկ կանգնելու, որպէսզի անոնք կարողանան զարգացնել իրենց ձիրքերը նաեւ՝ փափաքը, հասնելու լաւագոյնին:

Միութիւնս հիւսիսային ու հարաւային Ամերիկաներուն, Երոսայի, Աւստրալիոյ եւ Միջին Արեւելքի մէջ գործող սեփական 30 **Ամէնօրեայ ու Հարաբօրեայ Գալոցներով**, աւելի քան 6500 հայ աշակերտներու իրենց ազգային ինքնութեան կը ծանօթացնէ:

Գալիֆորնիոյ Գանուկա Փարքի Մանուկեան-Տեմիքճեան վարժարանը ուսումնական նախանձեղի մակարդակ մը ապահոված է, ուր 2003-2004 տարեշրջանի աւարտականներէն շատեր ընդունուած են աշխարհի հեղինակատր՝ Հարվըրտ, Ել, Փրինսթըն, Գոլոմպիա, Սթանֆորտ, Պըրքի ինչպէս նաեւ UCLA եւ MIT համալսարանները:

ՀԲԸՄի այլ՝ Սաութֆիլտ Միշիկընի Ալեքս եւ Մարի Մանուկեան վարժարանի մասին գնահատանքով արտայայտուած էր Տիքոյոթ քաղաքի ամենատարածուն թերթերէն The Detroit News օրաթերթը, գրելով որ դպրոցը «ուսումնական բարձր մակարդակի կողքին յետամուտ է աշակերտներուն ծանօթացնելու հայկական մշակոյթին ու պատմութեան»:

Շնորհիւ Գալուստ Կիլպէնկեան հաստատութեան առատածէնն նիւթական յատկացումին, Հալէպի Լ. Նաճարեան-Գ. Կիլպէնկեան դպրոցը իր 1600 աշակերտներով, օժտուեցաւ արդիական կրթական համալիրով մը:

Սեփական վարժարաններէն բացի, ՀԲԸՄիութիւնը նիւթապէս կը սատարէ հայկական այլ վարժարաններու եւս:

2002-2003 տարեշրջաններուն, 30 երկիրներէ 1119 ուսանողներու մօտաւորապէս մէկ միլիոն ամ. տոլարի կրթական նպաստներ կամ փոխառութիւններ յատկացուեցաւ:

ՀԲԸՄը ուսումնական այլ հնարատրութիւններ եւս կ'ընձեռէ երիտասարդներուն: Միութեանս կազմակերպութեամբ, **Նիւ Եորքի ու Փարիզի մէջ տեղի ունեցող մասնագիտական որակաւորման միջոցառումներուն** կը մասնակցին աշխարհի տարբեր երկիրներէ եկած ուսանող երիտասարդներ, որոնք մասնագիտութիւն ընտրած են բժշկութիւնը, իրաւաբանութիւնը, լրագրութիւնը, դրամատւային աշխատանքները, ֆինանսականը, մամուլը, կրթականը, հանրային յարաբերութիւնները եւ միջազգային յարաբերութիւնները: Անցնող երկու տարիներուն 67 ուսանողներ 11 երկիրներէ հնարատրութիւն ունեցան մասնակցելու այս հոյակապ ծրագրին:

Մօտ տասը տարիէ ի վեր, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան գործակցութեամբ, ՀԲԸՄը Հայաստանի մէջ կը հովանաւորէ երեք **Հայորդաց Կեդրոններ** Երեւանի մէջ: Նորքի, Արաբկիրի ու Մալաթիայի այս կեդրոնները ծառայութիւն կը մատուցեն ուսուցանելով երէխաներուն՝ պատմութիւն, համակարգիչներու գործածութիւն, արուեստ,



Հայաստանի Ամերիկեան Համալսարանի ուսանողները հանդերձ ընտանեօք կը տօնախմբեն իրենց շրջանաւարտութիւնը:

Փարիզի Ալեք Մանուկեան շարաբօրեայ վարժարանի աշակերտները:



Գերձայնային Կեդրոնի աշակերտներ Հնդկաստանէն, Ռուսիայէն եւ Հայաստանէն, իրենց դասատուին հետ:

ՀԲԸՄի Հայորդաց Կեդրոններէն մէկուն մէջ աշակերտները իրենց պարուսոյցին հետ:



երաժշտութիւն, պարարուեստ ձեռառուեստ ու մարզանք: Երեք կեդրոններուն մէջ ալ մատուցուել կան, ուր ամէն շաբաթ եկեղեցական արարողութիւններ կը մատուցուին եւ Աստուածաշունչի ընթերցումներ կը կատարուին:

Հաւատալով հայրենաբնակ ուսանողներու երկրի ապագան լաւագոյնս ղեկավարելու ունակութեան, ՀԲԸՄը հիմնական դերակատարութիւն ունեցաւ **Հայաստանի Ամերիկեան Համալսարանի** հիմնադրութեան գործընթացին մէջ, նաեւ, Միութիւնս կը ֆինանսաւորէ **Երեւանի Պետական Համալսարանի** կարգ մը ծրագիրներ: Վերոյիշեալ երկու կրթական հաստատութիւններն ալ բարձր ուսման տիրացած շրջանաւարտներու փաղանգ մը ունին, որոնք տնտեսութեան ու ճարտարարուեստի բնագաւառներէն ներս կ'աշխատին, ի շահ Հայաստանի բարօրութեան:

Չարկ տալով Հայաստանի առողջապահական մարզին, ՀԲԸՄը գործակցութեամբ Jefferson Ultrasound Research and Education Institute (Փենսիլվեյնիա) հաստատութիւններուն, հիմնադրեց **գերարդիական եւ ժամանակակից գերձայնային ախտաճանաչման կեդրոնը**, որ Երեւանի Բժշկական Ինստիտուտի հետ համագործակցաբար վերապատրաստման դասընթացներ ունի: Այս պարագան կը հրապուրէ Ռուսիայէն, Չինաստանէն ու Հնդկաստանէն երիտասարդներու, Հայաստանի մէջ բժշկագիտութիւն ուսանելու: Երեւանի Սուրբ Մեծն Ներսէս հիւանդանոցի բժշկական նոր սարքաւորումներով օժտուող Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան միջոցաւ, նոյնպէս կը նպաստէ Հայրենիքի առողջապահական համակարգի վերելքին:

Երիտասարդության Համախմբում



ՀԲԸՄԻ երիտասարդները կը հանգստանան Գ-տանի տանիքներում և Գ-տանի վարչակազմի համագործակցությամբ կը մեծապես ընդլայնեն իրենց հանգստանալու համապատասխան տեղերը:

Երեան, Նիւ Եորք, Սան Փաուլո, Պէյրոս, Մարսէլ, կամ Կլենտոյլ, երբ ՀԲԸՄԻ երիտասարդութիւնը կը հաւաքուի կամատր աշխատանք կատարելու, սորվելու, սորվեցնելու կամ ուրախ ժամանակ անցընելու, բնականաբար նոր բարեկամութիւններ կը հաստատուին: Հայերը կրնան հպարտանալ որ միեւնոյն անցեալը ունենալով կը ջանան միասնաբար կառուցել իրենց հաւարական ապագան:

ՀԲԸՄԻ Յաջորդ Սերունդ-ի խորհրդատու անդամները 1997 թուականէն սկսեալ, դպրոցական 7-էն 11-րդ դասարանի հարիւրէ աւելի հայ աշակերտներու օգտակար հանդիսացած են: Այս չափահաս կամաւորները իրենց խորհուրդներով ու կենդանի օրինակով կը փորձեն աշակերտներուն ուսումնական եւ վարք ու բարքի ուղղութիւն տալ: Անոնք կը ձգտին այս ապագայ երիտասարդներուն պատասխանատուութեան զգացում եւ ինքնաբար դառնալու անհրաժեշտութեան գիտակցութիւնը ներարկել:

Հայ երիտասարդները իրենց արձատներուն կապելու առաջադրանքով ՀԲԸՄԻ վարժարաններէն երկուքը՝ Գալիֆորնիայի Մանուկեան-Տեմիրճեան եւ Պուէնոս Այրեսի Մարի Մանուկեանը ամէն տարի իրենց արարտական դասարաններու աշակերտները այցելութեան կ'ուղարկեն Հայրենիք: Այս անմոռանալի փորձառութիւնը մեծապէս կ'ամրապնդէ պատանիներուն հայրենասիրութիւնն ու հայու հպարտութիւնը:

ՀԲԸՄԻ մարզական խաղերը առողջ մրցակցութեան մթնոլորտ մը կը ստեղծեն երիտասարդ միութեանականներուն միջեւ: Երոպայի ու Հարավային Ամերիկայի մասնաճիւղերը ունին իրենց շրջանային խաղերը, իսկ ՀԲԸՄԻ համաշխարհային խաղերը կը կազմակերպուին երկու տարին անգամ մը:

Երկամեայ այլ միջոցառում մըն է **ՀԲԸՄ FOCUS**ը, որ իրար մօտ կը ժողվէ ՀԲԸՄԻ երիտասարդական ծրագիրներուն հետեւած անդամները եւ բարեկամները: Վերջին հաւաքը 2003 թուականին հիւրընկալեց Մոնթրէալ քաղաքը ուր, հայկական կամատր աշխատանքներու մասին բննարկում տեղի ունեցաւ, ինչպէս նաեւ ՀԲԸՄԻ հայորդաց կեդրոններու աշակերտներու գունատր նկարչական ցուցահանդէս եւ հին Մոնթրէալի մէջ կալա ընթրիք:

ՀԲԸՄԻ հնագոյն գործունէութիւններէն է **ՀԵԸԻ մարզական ու սկստուտական շարժումները**, ուր ընդգրկուած են հազարաւոր անդամներ հինգ ցամաքամասերէն:

Երիտասարդ հայորդիները ՀԲԸՄԻ երդիքին տակ իրենք զիրենք հարազատ օճախի մէջ կը զգան, միեւնոյն ժամանակ յագուրդ տալով իրենց բազմապիսի հետաքրքրասիրութիւններուն:



ՀԲԸՄԻ Յաջորդ Սերունդ ծրագրի խորհրդատուները, աշակերտներն ու պաշտօնէաները Լոս Անճելոսի մէջ:



Հալէպի ՀԵԸԻ (Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն) անդամները Միւրթեան Քեսապի ճամբարին մէջ, Սուրիա:



Գալիֆորնիոյ Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի աշակերտները Հայաստանի մէջ:




ՀԲԸՄԻ FOCUS ծրագրի, 2003-ի Մոնթրէալի մտահորիզոն ձեռնարկի ընթացքին, որ տեղի ունեցաւ քաղաքի ժամանակակից արուեստներու քանգարանի սրահներէն մէկուն մէջ:



ՀԲԸՄԻ Երոպական 12-րդ խաղերու յաղթական մարզիկները, Վիեննա, Աւստրիա:



ՀԲԸՄԻ Սան Ֆերնանտոյի սկստուները:



Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն (ՀԲԸՄ)

55 East 59th Street, New York, NY 10022-1112

Tel. 212.319.6383 Fax.. 212.319.6507 Email agbuny@agbu.org Website www.agbu.org